ՄԵՂԵԴԻ ՎԱՐԴԱՎԱՌԻ

(ՓՆԱՐ ՆԱԽՆԵԱՑ)

Գանձ լուսոյ գերագոյն գերապայծառ ծաղիկ ծագեալ այսաւր 'ի Թաբաւր լերինն, զնախաստեղծին ըզփառսն և զմիւսանգամ գալըստեանն զխորհուրդն յայտնեցեր աշակերտաց քոց ՅԷր. իսկ 'ի բարձանց խաւսէին Մովսէս և Եղիա զելիցն կատարել քեզ յԵրուսաղեմ. փառք գալըստեան քո ՅԷր։

Աստանաւր վարդ վառեալ փրթթեալ 'ի գիրկս Հաւր՝ բոցատերև ոսկիաձոյլ փայլմամբ. իսկ 'ի բարձանց՝ 'ի հովանաւոր և 'ի լուսեղէն ամպոյն վկայեալ ձայնիւ գգուեցար 'ի հրաբուն շրթանցն ճշմարիտ սիրելի Որդի. փառք''։

Իսկ պետրոսեանցն պակուցեալ յաՀէն, 'ի հրաբուրբուք ճառագայթից սոսկալի լուսոյն, աղաղակէր առաքելոցն գաստապետն, արասցուք երիս տաղաւարս Յեառն և Մովսեսի և Եղիայի. զերորդութեանն գաւանելով գոչէր զխորհուրդ. փառք''։

Ուրախ լեր նորատունկ բուրաստան, անթառամ ծաղիկ, մարգարտատեսիլ և ծիրանաղբեաց կոյս, զի այսաւր որդին քո ճոխացեալ զհայրական իշխանութեան փայլեաց զփառս. նմա սպասէ Եղիա Մովսէսիւ, յանուն նորա ցնծան թաբաւր և Հերմոն։

Արդ աղաչեմք զքեզ Տիրամայր Մարիամ, բարեխաւսեա Քրիստոսի Աստուծոյ մերոյ, զի արժանի արասցէ զմեզ 'ի վերջին աւուրն հանդիպիլ նմա յաւդս լուսեղէն ամպով, որ աւրհնեալ ես յաւիտեանս. Ամէն։

ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻ

Նոր ինն աւետիք նորաշաւիղ խորհուրդ յայտնեալ,
Նոր ծաղիկ ցուցաւ, ծառք նորատունկ բուրաստանաց։
Նոր վարդ վառելով բոցատերև յԱդին դրախտին,
Նոր կենացածին կենդանատիպ պըտուղ բերեալ։
Այն ծառոյն տերև լայնասաղարթ պարտեաց պատճառ,
Աստ երկրագործին ծառ հայրենի տընկինագործ։
Ճուղ ճախարակագոյն՝ ճըղեր ունի ծայր զերկինիւք՝
Առեալ վերամբարձ ներման 'ի լեառն 'ի Թաբաւր։
Եկայք իմ սիրելիք, խընդիր՝ զՀայր տեսանելով,
Որում ցանգայիք աւուրն եհաս 'ի կատարումն։
Ցեսէք և ուրախ լերուք, զի Հայր յամպոյն ձայնէր,
Երևեալ 'ի Թաբաւր, մեզ աւետիս մատուցանէր։
Կամիս զկարծիս բառնալ՝ թէ սա է մարգարէն,

digitised by A.R.A.R.@

Սա և Եղիայ կամ Մովսէսի Նըմանակից.
Կերպիւըն Նըման և հրաշալի Հաւր փառակից,
փայլակնատարած շաւիղ և լոյս վերարփեննի.
Արփի նա ծագման տեսիլ ծագումն անծանաւթի,
Զայն զայն ծանաւթի լըսեալ թէ դա է իմ Որդի.
Ցերեսս 'ի վայր անգեալ աղաղակէր, աւգնեա Յիսուս.
Նոր տեսիլ տեսաք, Նորանորոգ և հրաշալի.
Մի՛ երկեղածլք, եղբարք, ես եմ Տէր Յիսուս,
Տէր մարգարէիցն որ պատմեցին զայս ասելով.
Եղիայ՝ 'ի վեր առեալ զմաշկեակն վերամբարձ ըղթիկամբն,
Զայն տեսանելով ծանուցանէր սուրբն Հեղիաս.
Մինչ արթունագնաց գետոց ընդ ուսըս բաժանեալ,
Նըման Մովսէսի է դա և տէրդ Եղիայի.
Պետրոս զարհուրեալ կազմէր երրեակըս տաղաւար.
Զայն աղերսալի ասնէր. Տէր, եթէ կամիս.
Եկեալ հարցանեն ըղխորհուրդըն դասք առաքելոցն.
Զի՞նչ իցէ համբաւըս. պատմեցէք մեզ մարգարէք.
Ի խաչ բարձրանալ կամի և անդ պըտղաբերել.
Ծաղիկ ցուցանել կամի 'ի լեառըն Գողգոթայ.
Քաջ պատուէր առեալ 'ի Տեառնէ սուրբ առաքելոցն,
Մի՛ ումեք յայտնէք զտեսիլդ. զի չև է ժամանակ.
Մինչ ես 'ի մեռելոց յառնեմ ըզձեզ կենագործեմ.
Կենացունաբեր քարոզ ընդ ձեզ եմ յաւիտեան.
Քրիստոսի փրկչին միշտ վայել է փառք և պատիւ,
Ընդ Հաւր և Հոգւոյն. այժմ յաւիտեանս յաւիտենից.

digitised by A.R.A.R.@